



Ֆինանսական հաշվետվություններ և  
Անկախ աուդիտորական եզրակացություն

"Ա - ԹԻ ՎԻ"

Սահմանափակ Պատասխանատվությամբ  
Ընկերություն

31 դեկտեմբերի 2020թ.

## Բովանդակություն

	Էջ
Անկախ աուդիտորական եզրակացություն	<u>3</u>
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	5
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	<u>6</u>
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	<u>7</u>
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	<u>8</u>
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	<u>9</u>

**"Փոր Էյ Քնսալթինգ" ՓԲԸ**



**"Four A Consulting" CJSC**

audit      accounting      advisory      assurance

ՀԱՊ ՀԿ      Ռեեստր      1 20 0219  
Հասցե      Նալբանդյան 50/136, ք Երևան ՀՀ,  
Հեռախոս      +374(10) 52 08 47

[www.4aconsulting.am](http://www.4aconsulting.am)  
[info@4aconsulting.am](mailto:info@4aconsulting.am)

CAA HGO Register 1 20 0219  
Address      Nalbandyan 50/136, Yerevan, RA  
Telephone      +374(10) 52 08 47

**Անկախ աուդիտորական եզրակացություն**

**"Ա- ԹԻՎԻ" ՍՊԸ -ի մասնակցին,**

**Կարծիք**

Մենք աուդիտի ենք ենթարկել "Ա-ԹԻՎԻ" ՍՊԸ-ի (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2020թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են Ընկերության 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն փոքր եւ միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտին (ՓՄԿ-ների ՖՀՄՍ):

**Կարծիքի հիմք**

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ "Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար" բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված "Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի" (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

**Անընդհատության հիմունքին վերաբերող էական անորոշություն**

Ձեր ուշադրություն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություն 25-ի վրա, որտեղ նշվում է, որ Ընկերությունը կրել է 129,778 հազար դրամ գումարի գուտ կորուստ 2020 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում, և այդ ամսաթվի դրությամբ Ընկերության ընթացիկ պարտավորությունները գերազանցել են իր ընդհանուր ակտիվները 353,234 հազար դրամ գումարի չափով: Այս դեպքերը կամ իրավիճակները, ի թիվս Ծանոթագրություն 25-ում նշված այլ հարցերի, ցույց են տալիս, որ առկա է էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Մեր կարծիքը չի ձևավորվել այս հարցի կապակցությամբ:

**Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը**

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որոնք տալիս են ճշմարիտ և իրական պատկեր ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի համաձայն, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

**Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար**

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով գերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, գեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը:  
Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Մակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

26 ապրիլ 2021թ.

Անիկ Մարտիրոսյան

Տնօրեն/ Աուդիտի ղեկավար-Քանոնադատ



## Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

	Ծանոթ.	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հազար դրամ			
Ակտիվներ			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	4	37,982	7,032
Ոչ նյութական ակտիվներ	5	315	1,157
Հետաձգված հարկային ակտիվներ	6	27,872	2,557
		<u>66,169</u>	<u>10,746</u>
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ	7	5,894	14,613
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	8	21,028	38,515
Ծահույթահարկի կանխավճար		1,194	1,879
Դրամական միջոցներ	9	445	315
		<u>28,561</u>	<u>55,322</u>
		<u>94,730</u>	<u>66,068</u>
Ընդամենը ակտիվներ			
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
<i>Կապիտալ և պահուստներ</i>			
Կանոնադրական կապիտալ	10	500	500
Կուտակված վնաս		(353,734)	(223,921)
		<u>(353,234)</u>	<u>(223,421)</u>
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Փոխառություններ	11	267,046	181,657
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	12	180,918	107,832
		<u>447,964</u>	<u>289,489</u>
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		<u>94,730</u>	<u>66,068</u>


Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 26 ապրիլ 2021թ.


Հրաչյա Բեշիշյան

Արաքսյա Բարդուղյան

Գլխավոր տնօրեն

Գլխավոր հաշվապահ





Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 23-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

## Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

		2020թ. դեկտեմբերի 31- ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հազար դրամ	Ծանոթ.		
Գովազդային ծառայությունների մատուցումից հասույթ		230,403	380,897
Այլ եկամուտներ		23,125	82,140
		<u>253,528</u>	<u>463,037</u>
Մեփական հաղորդումների, ֆիլմերի ծախսեր		(44,181)	(61,363)
Հեռարձակման ծախսեր		(15,050)	(15,050)
Փոխհատուցում աշխատակիցներին		(288,997)	(346,579)
Վարձակալության ծախսեր		(25,033)	(25,170)
Մաշվածություն և ամորտիզացիա		(8,518)	(12,051)
Այլ ծախսեր	13	(25,048)	(29,521)
Գործառնական գործունեությունից վնաս		<u>(153,299)</u>	<u>(26,697)</u>
Ֆինանսական, զուտ		139	24
Այլ ֆինանսական հոդվածներ, զուտ	14	(1,933)	(251)
Վնաս մինչև հարկերը		<u>(155,093)</u>	<u>(26,924)</u>
Շահութահարկի գծով ծախս/փոխհատուցում	15	25,315	(1,649)
Չուտ վնաս		<u>(129,778)</u>	<u>(28,573)</u>
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ			
<i>Հոդվածներ, որոնք հետագայում չեն վերադասակարգվի շահույթին կամ վնասին</i>		-	-
<i>Հոդվածներ, որոնք հետագայում կվերադասակարգվեն շահույթին կամ վնասին</i>		-	-
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ		<u>(129,778)</u>	<u>(28,573)</u>

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 23-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

## Մեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

	Կանոնադրական կապիտալ	Կուտակված վնաս	Ընդամենը
Հազար դրամ			
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	500	(195,348)	(194,848)
Տարվա վնաս 2019թ.	-	(28,573)	(28,573)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	(28,573)	(28,573)
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	500	(223,921)	(223,421)
Տարվա վնաս 2020թ.		(129,778)	(129,778)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ		(129,778)	(129,778)
Ճշգրտում		(35)	(35)
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	500	(353,734)	(353,234)

Մեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 23-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

## Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31- ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31- ին ավարտված տարի
<i>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Տարվա վնաս	(129,778)	(28,573)
<i>Ճշգրտումներ՝</i>		
Մաշվածություն և ամորտիզացիա	8,518	12,051
Ոչ նյութական ակտիվների և հիմնական միջոցների դուրս գրումից վնաս	-	809
Շահութահարկի գծով ծախս /փոխհատուցում	(25,315)	1,649
Փոխարժեքային տարբերությունից (օգուտ)/վնաս	1,933	251
Ֆինանսական եկամուտ	(139)	(24)
Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխություններ	(144,781)	(13,837)
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	17,499	34,902
Պաշարների փոփոխություն	8,719	(4,535)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	71,138	18,888
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	(47,425)	35,418
Վճարված շահութահարկ /փոխհատուցում	685	(4,094)
Վճարված տոկոսներ	-	-
<i>Գործառնական գործունեության համար օգտագործված գուտ դրամական միջոցներ</i>	(46,740)	31,324
<i>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(38,626)	(6,330)
Փոխառություններ, գուտ	-	800
Ստացված տոկոսներ	139	24
<i>Ներդրումային գործունեության համար օգտագործված գուտ դրամական միջոցներ</i>	(38,487)	(5,506)
<i>Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Փոխառություններ, գուտ	85,389	(26,072)
Նախորդ տարվա ճշգրտում	(35)	
<i>Ֆինանսական գործունեությունից ստացված գուտ դրամական միջոցներ</i>	85,354	(26,072)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների գուտ աճ/(նվազում)	127	(254)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	3	(2)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբում	315	571
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում	445	315

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 23-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: